

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մարդու էթոլոգիա

Ուսումնամեթոդական ուղեցույց-ծրագիր

*Մասնագիտական դասընթացի
«Մշակութաբանություն» մասնագիտության մագիստրատու-
րայի II կուրսի ուսանողների համար*

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

2016

ՀՏԴ 57.02

ԳՄԴ 28.7

Մ 356

*Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ պարմության ֆակուլտետի
գիտական խորհուրդը*

Կազմ. Ռուզան Ալբերտի Մկրտչյան

Մ 356 **Մարդու էթոլոգիա:** Ուսումնամեթոդական ուղեցույց-ծրագիր/
Կազմ. Ռուզան Ալբերտի Մկրտչյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2016,
20 էջ:

ՀՏԴ 57.02

ԳՄԴ 28.7

ISBN 978-5-8084-2102-8

© ԵՊՀ հրատ., 2016

© Կազմողի համար, 2016

Դասընթացի անվանումը Մարդու էթոլոգիա

Ներածություն

Ներկայացված դասընթացը վերաբերում է մարդաբանության ոլորտին, այն նվիրված է վարքային մարդաբանությանը, որը ձևակերպված է որպես «մարդու էթոլոգիա»: Նոր զարգացող գիտաճյուղ է, ունի 80-ամյա պատմություն, տեսական և կիրառական: Մարդու էթոլոգիան ուսումնասիրում է մարդկային վարքի կենսաբանական հիմնաշերտը, համամարդկային վարքային ընդհանրականները՝ խաչամշակութային համեմատական մեթոդներով: Բացահայտում է վարքային դրսևորումների ունիվերսալիաները և էթնիկական, սոցիալական, գենդերային, տարիքային տարբերակվածությունները: Այս գիտության ընձեռած տեղեկատվությունը լայնորեն կիրառվում է ներքին և արտաքին քաղաքականության ոլորտում: Ազդեցիկ է, հաշտարարության, խուճապի, ինտելեկտուալ և ֆիզիկական առանձնահատկությունների և այլ վարքային նկարագրերի տվյալների համահավաքների կազմումը, դրանց խմբավորումն ու քարտեզագրումն ըստ տարածքային, էթնիկական և այլ հատկանիշների կարող են կարևոր ռազմավարական արժեք ունենալ:

Ծրագրի նկարագրություն

Գասընթացի նպատակը.

Ուսանողի մոտ ձևավորել կայուն գիտելիքներ մարդկային վարքի կենսաբանական հիմնաշերտի, նրա ժառանգաբանական մեխանիզմների և այդ վարքի մշակութային դրսևորումների վերաբերյալ գոյություն ունեցող գիտական մեթոդների մասին:

Գասընթացի չափորոշիչները`

Գասընթացի ավարտին ուսանողը կունենա.

Գիտելիք և իմացություն.

- մարդու վարքի ընդհանրական և կոնկրետ դրսևորումների (առաջատարություն, ազդեախա, հանդուրժողականություն, հույզեր, միմիկա, ժեստեր և այլն),

- նրանցից յուրաքանչյուրի էվոլյուցիոն ճանապարհով ձևավորման, զարգացման պատմության և մշակութային դրսևորումների մասին:

Ունակ կլիմի.

- իրագործել կոնկրետ վարքային դրսևորման հետազոտություն ունիվերսալ մեթոդական հարցաշարի միջոցով,

- հետազոտության արդյունքները մեկնաբանել խաչամշակութային համեմատական համատեքստում,

- կազմել վարքային հատկանիշների քարտեզներ,

- ինչպես նաև կատարել մշակութաբանական քննություններում վարքաբանության մշակութային ընդհանրական և տարբերակված դրսևորումների հաշվառում:

Գասընթացի կառուցվածքը, մեթոդոլոգիան ու թեմաների նկարագրությունը

Գասընթացը ենթադրում է 32 ժամ` 26 դասախոսություն, 4` սեմինար-քննարկում և 2` գործնական պարապմուտք:

Դասավանդման մեթոդոլոգիա՝

Դասընթացի դասավանդման ընթացքը կազմակերպվում է հետևյալ կերպ՝

1. Դասախոսությունները կազմված են տեսական և նկարագրական նյութի ներկայացումից, ապա քննարկումներից, ուղեկցվում են դիդակտիկ նյութերի մատուցումներով:

2. Մեմինարների ընթացքում ուսանողները խմբերով ներկայացնում են իրենց նախընտրած թեմաները: Խմբի յուրաքանչյուր անդամ կոնկրետ թեմայի որոշակի բաժին է ներկայացնում: Մեմինարներն ընթանում են ուսանողների միջև հարց և պատասխանի ձևով, դասախոսը միջամտում է միայն անփոփելուց:

3. Գիտելիքի ստուգումը իրագործվում է ռեֆերատների և վերջնական բանավոր քննության տեսքով:

Քննման եղանակները՝

1. Ռեֆերատները գնահատվում են դրական, եթե հանձնարարված թեմայի շրջանակներում ուսանողը դրսևորում է բավարար գիտելիքներ:

2. Բանավոր հարցման ժամանակ սեմինարների ընթացքում գնահատվում է և կոնկրետ պատասխանը, և քննարկման ակտիվ մասնակցությունը:

3. Բանավոր հարցում՝ վերջնական բանավոր քննության տեսքով:

Դասընթացի բովանդակությունը

Թեմաների վերնագրեր

1. Մարդու էթոլոգիան մարդաբանական գիտաճյուղերի համակարգում:

2. Մարդու էթոլոգիայի կապը հարակից գիտությունների հետ:

3. Մարդու էթոլոգիայի ուսումնասիրության առարկան և մեթոդը:

4. Ագրեսիա և հաշտարարություն:

5. Առաջատարություն:

6. Մանկության էթոլոգիա:

7. Ոչ վերբալ հաղորդակցություն:

8. Հույզեր և վարք:

9. Գեղեցկության և գրավչության հոգեբանությունը վարքաբանական տեսանկյունից:

10. Գեղերային մարդաբանություն:

11. Հոմոսեռականության վարքաբանություն:

12. Ծիծաղի մարդաբանություն:

13. Ստի հոգեբանությունը:

14. Աղքատության վարքաբանություն:

Թեմաների կարճ նկարագրություն

1. Մարդու էթոլոգիան մարդաբանական գիտաճյուղերի համակարգում

Մարդու էթոլոգիա առարկան որպես նոր ձևավորված գիտական ուղղություն: Մարդու էթոլոգիա գիտաճյուղի ձևավորման պատմությունը. Կ. Լորենցը և Ն. Թինբերգենը որպես այս գիտության հիմնադիրներ: Էվոլյուցիոն հոգեբանությունը և Չ. Դարվինի տեսությունը որպես սույն գիտաճյուղի մեթոդական հիմք: Մարդու էթոլոգիա գիտաճյուղի ամերիկյան և եվրոպական դպրոցները, դրանց էմպիրիկ և տեսական մոտեցումները:

2. Մարդու էթոլոգիայի կապը հարակից գիտությունների հետ

Մարդու էթոլոգիայի կապը հարակից գիտաճյուղերի հետ (նեյրոկենսաբանություն, էվոլյուցիոն հոգեբանություն, հոգեվերլուծական տեսություն, համեմատական դիցաբանություն, մշակութային մարդաբանություն և այլն): Մարդու էթոլոգիան որպես կամրջակային, սոցիոկենսաբանական գիտություն և առնչությունը հոգեբանության ու նեյրոֆիզիոլոգիայի հետ: Մարդու էթոլոգիայի հետ զուգընթաց ձևավորված գիտաճյուղերը (բիոէվոլյուցիոն, սոցիոկենսաբանություն, կենսաքաղաքականություն, վարքային մարդաբանություն):

3. Մարդու էթոլոգիայի ուսումնասիրության առարկան և մեթոդը

Մարդու էթոլոգիայի ուսումնասիրության առարկան մարդկային վարքի ունիվերսալ հիմքերն են, բնածին վարքային ծրագրերը, ենթագիտակցական վարքային ձևերը: Վարքի ուսումնասիրությունը, որպես համակարգ. ա) վարքի ձևաբանությունը, բ) վարքի գործառույթները, գ) վարքը՝ օնթոգենետիկական և ֆիլոգենետիկական հարթություններում: Մարդկային վարքի ընդհանրականները՝ ագրեսիա, հաշտարարություն, դիմախաղ, ժեստ, հույզ, ծիծաղ, լաց և այլն, որպես ունիվերսալ համակարգեր: Խաչամշակութային համեմատականը որպես ուսումնասիրության մեթոդ:

4. Ագրեսիա և հաշտարարություն

Ագրեսիան և հաշտարարությունը որպես սոցիալական խմբերի և, մասնավորապես, մարդկային վարքի ընդհանրական: Պոպուլյացիաների և մարդկային հանրությունների տարածքային վարքը և փոխհարաբերակցությունը նրանց խտության հետ: Ագրեսիայի և հաշտարարության վարքային դրսևորումները պրիմատների և մարդկային հանրություններում: Բնակեցրած տարածքի խտության գործոնը և մարդկային հասարակության ֆիզիոլոգիական ու հոգեբանական իրավիճակը: Մարդկային վարքն ամբոխի միջավայրում: Տարածքայնությունը որպես վարքային ընդհանրական: Ագրեսիան և հաշտարարությունը որպես սոցիալական հարաբերությունների կարգավորիչ: Ագրեսիայի և հաշտարարության էվոլյուցիոն ակունքները և հարմարվողական գործառույթները:

5. Առաջատարություն

Առաջատարության, իշխանության և սեռի փոխհարաբերակցությունը սերնդագործության հաջող գործընթացի հետ: Պրիմատների և մարդկային հասարակության հիերարխիկ կազմը, գենդերային առաջատարությունը և սննդի ռեսուրսների բաշխումը: Մանկասպանությունը պրիմատների և մարդկային հասարակություններում: Սերնդագործության համար պիտանի տարիքի կանանց լիկվիդացումը որպես ծիսական կարգավորիչ ժողովրդագրական ճգնաժամերի պարագայում: Հերոսի կերպարը մարդաբանական և մշակութաբանական համատեքստում: Հերոսը որպես տարածքային ամբողջությունը պահպանող գործոն: Հերոսը որպես սերնդագործության հաջող ընթացքը ապահովող գործոն: Հերոսը որպես ազգածին նահապետ: Հերոսը որպես նահատակ: Էպիկական հերոսների խաչամշակութային համեմատական:

6. Մանկության էթոլոգիա

Մանկական վարքի ընդհանրականները: Մանկական ագրեսիա, հաշտարարություն, առաջատարություն և կոպիտ խաղային պայքար:

Մանկական կոնֆլիկտային և հետկոնֆլիկտային վարքի դրսևորումները:

7. Ոչ վերբալ հաղորդակցություն

Մարդկային ոչ վերբալ հաղորդակցության էթոլոգիական մոտեցումների առավելությունը: Ոչ վերբալ հաղորդակցության էթնոհոգեբանական առանձնահատկությունների խաչամշակութային համեմատական վերլուծության հնարավորությունները: Ոչ վերբալ հաղորդակցության հիմնական դրսևորումները:

Հուրառական հաղորդակցություն: Ֆերամոնները և գրավչությունը: Հարազատների և օտարների նկատմամբ հոտառական տարբերակվածությունը: Քրտինքի հոտի գնահատման խաչամշակութային համեմատականի իրագործման նկարագրությունը:

Դիմախաղային հաղորդակցություն: Դիմախաղը որպես ազդանշան և համամարդկային ընդհանրական դրսևորում: Ինքնաբուխ և կառավարվող դիմախաղ: Ինքնաբուխ դիմախաղը որպես մարդկային բնածին բնութագիր: Դիմախաղի կարևորությունը անհատական հաղորդակցության պարագայում:

Ժեստերի մշակույթ: Ժեստերի միջոցով հաղորդակցության իրագործումը: Վաղ ֆիլոգենետիկական ծագում ունեցող ժեստեր: Ունիվերսալ ժեստ էմբլեմաներ և դրանց խաչամշակութային տարբերակները: Տարբեր մշակույթներում ժեստերի և ձեռքերի շարժումների ինտենսիվության առանձնահատկությունները: Խուլ-համրերի լեզուն որպես ժեստերի սիմվոլիկ լեզու:

Դիմախաղը, մարմնի դիրքը, ձայնի տոնայնությունը, հայացքը որպես մարդկային վարքի ընդհանրականներ: Վերջիններիս դասակարգումը ըստ ցուցադրիչների, աղապտերների, էմբլեմաների, հույզերի ու կարգավորիչների:

8. Հույզեր և վարք

Մարդը, որպես ամենահուզական արարած: Հույզերի նյարդաֆիզիոլոգիական հիմքերը: Առաջնային հիմնային հույզեր: Վախի, ուրախության, տխրության, զարմանքի, զգվանքի, զայրույթի միմիկական

համամարդկային ընդհանրական դրսևորումները: Կ. Իգարդի և Պ. Էկմանի փորձարարական ապացույցները առաջնային հույզերի ընդհանրական բնույթի մասին: Մարդու էվոլյուցիան և երկրորդային հույզերի ձևավորումը որպես այդ գործընթացի արդյունք: Մերը որպես ունիվերսալ մարդկային հույզ: Մեղքի, ամոթի հույզերը մշակութային համատեքստում:

9. Գեղեցկության և գրավչության հոգեբանությունը վարքաբանական տեսանկյունից

Մեռական ընտրության հիմնահարցը Չ. Դարվինից մինչ օրերս: Արական և իգական սեքսուալ ռազմավարությունները և հաջող սերնդագործության ու վերարտադրության փոխհարաբերակցությունը:

Գեղեցկության և գրավչության ընկալման համամարդկային ընդհանրականները: Արական և իգական գրավչության չափանիշները. ա) երիտասարդություն, բ) սիմետրիկություն, գ) գլխի փարթամ մազածածկույթ: Արական գրավչության բնական չափանիշները. ա) փարթամ երրորդային մազածածկույթ, բ) թիկնեղություն, գ) միջինից բարձր հասակ, դ) զանգվածեղություն: Իգական գեղեցկության բնական չափանիշները. գլխի մազերի, ունքերի, թարթիչների առատություն, կրծքի և կոնքերի փարթամություն, կարմրայտություն: Մեռական ընտրության ռազմավարությունը, վերարտադրության գործընթացը և գուզընկեր ընտրելու մշակույթը ավանդական և ժամանակից հասարակություններում:

10. Գեներային մարդաբանություն

Գեներ և սեռ: Գեներային կարծրատիպեր և նրանց կայունության պատճառները: Գեներային ինքնություն (բնություն և դաստիարակություն): Աշխատանքի գեներային բաժանումը ավանդական և ժամանակակից հասարակություններում: Ժամանակակից գեներային տարբերվածության հիմնախնդիրները: Գեները և քաղաքակառուցությունը:

11. Հոմոսեռականության վարքաբանություն

Հոմոսեռականությունը որպես մարդկային փոքրամասնության վարքային ընդհանրական: Հոմոսեռական վարքը Հին, Անտիկ աշխարհների և ավանդական մշակույթներում: Հոմոսեռական վարքի էվոլյուցիոն նախադրյալները: Հոմոսեռականության դեմ ձևավորված նեգատիվ վարքի, հույզերի (զգվանք, արհամարհանք, վախ, ոչնչացնելու ցանկություն) էվոլյուցիոն նախադրյալները:

12. Ծիծաղի մարդաբանություն

Ծիծաղը որպես միայն մարդկային տեսակին հատուկ վարքային ընդհանրական: Ծիծաղի և հումորի փոխհարաբերակցությունը: Հումորի նեյրոֆիզիոլոգիան: Ծիծաղի և հումորի կապը ուղեղի ասիմետրիկության հետ: Ծիծաղի և հումորի գենդերային ընկալումները և դրսևորումները: Ծիծաղի և հումորի ֆիլոգենեզը: Ծիծաղի և հումորի սաղմնային դրսևորումները պրիմատների միջավայրում: Ծիծաղի և հումորի առաջացման էվոլյուցիոն բացատրությունները: Ծիծաղի և խոսքի փոխհարաբերակցությունը մարդկային մակրոէվոլյուցիայի ժամանակահատվածում: Հումորը և սատիրան որպես մշակույթ: Ծիծաղը, լացը և հորանջը որպես մարդկային վարքի բինար դրսևորումներ և հակասթրեսորներ:

13. Ստի հոգեբանությունը

Սուտը որպես մարդկային տեսակին հատուկ վարքային ընդհանրական: Սուտը, հույզերը, բացահայտման վախը, խղճի խայթը և խաբելու հաջողության բերկրանքը: Ստի վերբալ և ոչ վերբալ դրսևորումները: Ստի բացահայտման ձայնային, ժեստային, միմիկական ախտանիշները: Ստի մշակույթը: «Սուտասանների» (օր.՝ Սուտիկ որսկան, Բարոն Մյունհաուզեն) գեղարվեստական կերպարների խաչամշակութային համեմատական: Սուտը հասարակական կյանքում:

14. Աղքատության վարքաբանություն:

Աղքատության վարքը որպես մասնագիտացում: Մուրացկանության ռազմավարությունը.

ա) ակտիվ ագրեսիա, բ) երգը և նվագելը որպես «ռեցիպրոկային ալտրուիզմի» ռելիզոր, գ) մեկուսացված, հուզականությունից զուրկ վարք:

Մուրացկանությամբ զբաղվող մարդկանց հոգեբանությունը: Աղքատները, որպես խարանված սոցիալական խումբ: Աղքատ խավը և հասարակությունը:

Մուրացկանության ֆենոմենի բացատրությունը էվոլյուցիոն տեսությունների համատեքստում:

Գործնական պարապմունքներ

1. «Անհատական վարքի և հորմոնալ ստատուսի ուսումնասիրության հարցաշար»-ի լրացում:

2. Ագրեսիայի և հաշտարարության «հուշարարներ» հանդիսացող մարդաչափական հատկանիշների փաստագրում: Ջույզ ձեռքերի 2-րդ և 4-րդ մատների չափագրում և դրանց գործակցի հաշվարկում: Հասակի, քաշի, ձեռքի ուժի տվյալների արձանագրում:

3. Ժառանգաբանական նյութի (թքի) հավաքագրում ստերիլ խոզանակների միջոցով լաբորատոր վերլուծության համար:

4. Ուսանողները հարցաշարը վիճակագրական վերլուծության են ենթարկում, ապա ստանում միջինացված վարքային մոդելներ: Գործնական պարապմունքների ժամանակ նրանց համանման նյութեր են տրամադրվում, որոնք հավաքագրված են այլ էթնիկ խմբերի մոտ և փորձում են իրագործել խաչանշակության համեմատական վերլուծություն կոմպոնենտային վիճակագրական մեթոդի միջոցով: Այս աշխատանքը վեր է հանում ագրեսիվ և հաշտարարական վարքերի համամարդկային ընդհանրականները և էթնիկական տարբերակվածությունը:

Այս գործողությունները ուսանողներն իրականացնում են միմյանց նկատմամբ:

Ռեֆերատներ

Գասընթացի ընթացքում ռեֆերատների հանձնարարումը և դրանց բանավոր ներկայացումը նպատակ ունի ուսանողների մոտ մշակել հետևյալ ունակությունները.

ա. ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելը հանձնարարած գրականության շրջանակներում,

բ. գրավոր աշխատանքը շարադրելը. ընդհանուր շարադրանք, գիտական ապարատ և գրականության ցանկ,

գ. համատեղ աշխատանքը,

դ. բանավոր ներկայացումը, բանավեճ կատարելը:

Ռեֆերատների թեմաներ

1. Էթոլոգիական տեսություններ (Կ. Լորենց, Ն. Թինբերգեն):
2. Մարդու էթոլոգիայի, բիոէվոլյուցիոնի, սոցիոլոգիայի և սոցիոլոգիայի սոցիոլոգիաների և տարբերությունները:
3. Մարդու էթոլոգիան և էվոլյուցիոն տեսությունները (Չ. Դարվին, Ա. Ուոլես):
4. Խաչամշակութային հոգեբանությունը, որպես մարդու էթոլոգիայի մեթոդական հիմք:
5. Ագրեսիան և հաշտարարությունը, որպես լարվածության վերահսկողության մեխանիզմներ:
6. Մանկական կոպիտ խաղը, որպես վարք և ագրեսիա:
7. Ժեստերի և մարմնի լեզուն:
8. Մարմինը, որպես տեքստ:
9. Հույզերի մշակույթը, լեզուն և վարքաբանությունը:
10. Իգական գրավչության չափանիշները:
11. Արական գրավչության չափանիշները:
12. Արական և իգական սեքսուալ ռազմավարություններ:
13. Ծիծաղը, լացը և հորանջը, որպես հակասթրեստներ:
14. Մուտը, որպես մարդկային հասարակության անբաժան ուղեկից:
15. Աղքատության վարքաբանությունը:

Գրականության ցանկ

Պարտադիր՝

1. Մկրտչյան Ռ., Փիլիպոսյան Ա., Մանկասպանությունը Գեղարքունիքի մ.թ.ա. III-I հազ. խմբային բաղումներում, «Ընտանիքի հետազոտման հիմնախնդիրները» հանրապետական գիտաժողովի նյութեր, Երևան, 2001, էջ 100-105:

2. Бутовская М. Л., Антропология пола, “Век 2”, Фрязино, 2013, 256 с.

3. Бутовская М. Л., Тайны пола. Мужчина и женщина в зеркале эволюции, “Век 2”, Фрязино, 2004, 368 с.

4. Бутовская М. Л., Фрайенберг Л. А. У истоков человеческого общества, “Наука”, Москва, 1993, 256 с.

5. Бутовская М. Л., Этология человека и смежные дисциплины, современные методы исследований, “Одна восьмая”, Москва, 2004, 337 с.

6. Бутовская М. Л., Язык тела: природа и культура, “Научный мир”, Москва, 2004, 440 с.

7. Бутовская М. Л., Дьяконов И. Ю., Ванчатова М. А., Будущие среди нас. Нищие в России и странах Европы, история и современность. "Научный мир", Москва, 2007, 280 с.

8. Дарвин Ч., О выражении эмоций у человека и животных, “Питер”, Санкт-Петербург, 2001, 371 с.

9. Дарвин Ч., Происхождение видов путем естественного отбора, “Наука”, Москва, 2001, 496 с.

10. Дарвин Ч., Происхождение человека и половой отбор, “Терра”, Москва, 2009, 784 с.

11. Козинцев А. Г., Человек и смех, “Алетейя”, СПб, 2007, 236 с.

12. Мацумото Д., Человек, культура, психология. Удивительные загадки, исследования и открытия, “Прайм-Еврознак”, СПб, 2008, 668 с.

13. Մկրտչյան Ր., Методические основы преподавания курса "Этология человека", «Պատմություն և մշակույթ» Հայագիտական Հանդես, ԵՊՀ հրատ. 2015, էջ 432-442:

14. Մկրտչյան Ր., Кочарян Л., Караханян А., Ритуальное умерщвление как социо-демографический регулятор, «Археология, Этнология и Фольклористика Кавказа», Эчмиадзин, 2003, стр. 83-87

15. Палмер Дж., Палмер Л., Эволюционная психология, Секреты поведения Homosapiens, “Прайм-Еврознак”-“Олма-пресс”, СПб-Москва, 2003, 382 с.

16. Пиз А., Язык телодвижений. Как читать мысли окружающих по их жестам, “Эксмо”, Москва, 2003, 288 с.

17. Суэми В., Фернхем А., Психология красоты и привлекательности, “Питер”, Москва-СПб, 2009, 240 с.

18. Экман П., Психология лжи. Обмани меня если сможешь, “Питер”, Москва-СПб, 2010, 304 с.

19. Scott. E., Panksepp J., Rough-and-tumble play in human children, Aggressive behavior, Vol. 29, (2003), 539–551 pp.

Լրացուցիչ

1. Հարությունյան Ս., Հայ առաքելաբանություն, «Համազգային», 2002, 527 էջ:

2. Հարությունյան Ս., Սահակյան Ա., Սասնա ծռեր, ՀԽՍՀ ԳԱ հրատ, Երևան, 1979, էջ 3-25:

3. Պետրոսյան Ա., Հայկական և հյուսիսկովկասյան նարթական էպոսների հարաբերությունը, «Հայակական էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը», «Գիտություն», Երևան, 2012, էջ 8-52:

4. Агрессия и мирное сосуществование: универсальные механизмы контроля социальной напряженности у человека (под ред. Бутовская М. Л.), “Научный мир”, Москва, 2006, 276 с.

5. Белик А. А., Психологическая антропология (культура и личность). Историко-теоретический очерк, “Личность, культура, этнос: современная психологическая антропология”, “Смысл”, Москва, 2001, стр. 7-31.

6. Бутовская М. Л., Половой отбор и различие мужских и женских сексуальных стратегий в человеческом обществе, Сборник: “Как человек заселил планету Земля”. Фонд содействия охране памятников археологии «Археологическое наследие», Москва, 2006, стр. 201-225.

7. Бутовская М. Л., Половое размножение как базовая адаптация организмов в нестабильной среде обитания, Сборник: “Как человек заселил планету Земля”. Фонд содействия охране памятников археологии «Археологическое наследие», Москва, 2006, стр. 160-201.

8. Дерягина М. А., Бутовская М. Л., Систематика и поведение приматов, “Энциклопедия российских деревень”, Москва, 2004, 270 с.
9. Добровольская М. В., Человек и его пища, “Научный мир”, Москва, 2005, 368 с.
10. Зорина З. А., Полетаева И. И., Зоопсихология, Элементарное мышление животных, “Аспект Пресс”, Москва, 2003, 320 с.
11. Кон И. С., Ребенок и общество, “АКАДЕМА”, Москва, 2003, 336 с.
12. Кречмер Э., Медицинская психология, “Союз”, Санкт-Петербург, 1998, 464 с.
13. Крэйн У., Секреты формирования личности, “Прайм-Еврознак”, СПб, 2002, 512 с.
14. Мифы народов мира. Энциклопедия: в 2-х т., “Сов. энциклопедия”, Москва, 1991, Т. 1, 671 с.
15. Мифы народов мира. Энциклопедия: в 2-х т., “Сов. энциклопедия”, Москва, 1992, Т. 2, 719 с.
16. Морис Д., Голая женщина. “Эксмо”, Москва, 2009, 380 с.
17. Морис Д., Голая обезьяна. “Эксмо”, Москва, 2009, 318 с.
18. Морис Д., Основной инстинкт. “Эксмо”, Москва, 2009, 316 с.
19. Принс Р., Шаманы и эндорфины: гипотезы для синтеза, “Личность, культура, этнос: современная психологическая антропология”, “Смысл”, Москва, 2001, стр. 483-501.
20. Ранк О., Закс Г., Психоаналитическое исследование мифов и сказок. Сборник “Между Эпидом и Озирисом: Становление психоаналитической концепции мифа”, “Совершенство”, Москва, 1998, стр. 207-247.
21. Ранк О., Миф о рождении героя. Сборник “Между Эпидом и Озирисом: Становление психоаналитической концепции мифа”, “Совершенство”, Москва, 1998, стр. 123-207.
22. Рикерт Г., Науки о природе и науки о культуре, “Республика”, Москва, 1998, 413 с.
23. Фрейд З., Два фрагмента об Эпиде. Сборник “Между Эпидом и Озирисом: Становление психоаналитической концепции мифа”, “Совершенство”, Москва, 1998, стр. 39-57.
24. Фрейд З., Добывание и покорение огня. Сборник “Между Эпидом и Озирисом: Становление психоаналитической концепции мифа”, “Совершенство”, Москва, 1998, стр. 57-59.

25. Фромм Э., *Анатомия человеческой деструктивности*, “АСТ-Москва”, Москва, 2009, 640 с.

26. Юнг К. Г., *Бессознательное рождение героя*. Сборник "Между Эпидом и Озирисом: Становление психоаналитической концепции мифа", “Совершенство”, Москва, 1998, стр. 276-313.

27. Bjorklund D. F., Brown R. D., *Physical play and cognitive development: Integrating activity, cognition, and education*, *Child Development*, June 1998, Vol. 69, Number 3, 604-606 pp.

28. Kottak C.P., *Anthropology: The exploration of human diversity*. “McGraw-Hill” Inc., New York, St. Louis etc., 5th ed. 1991, 496 p.

29. Maccoby E. E., *Gender and group process: A developmental perspective*, *Current Directions In Psychological Science*, Volume 11, Number 2, April 2002, 54-58 pp.

30. Moller L. C., Hymel Sh., Rubin K. H., *Sex typing in play and popularity in middle childhood*, *Sex Roles*, Vol 26, Nos. 7/8, 1992, 331-353 pp.

31. Pellegrini A. D., Smith P. K., *Physical activity play: The nature and function of a neglected aspect of play*, *Child Development*, June 1998, Vol. 69, Number 3, 577-598 pp.

32. Smith P.K., Boulton M., *Rough-and-tumble play, aggression and dominance: Perception and behavior in children’s encounters*, *Human Development* 1990; 33, 271-288 pp.

33. Stanford C., Allen J.S., Antón S. C., *Exploring Biological Anthropology: the essentials*, 2nd ed., “Prentice Hall” Boston, Columbus etc. 2010, 465p.

Քովանդակություն

Դասընթացի անվանումը	3
Մարդու էթոլոգիա	3
Ներածություն	3
Ծրագրի նկարագրություն	4
Դասընթացի բովանդակությունը	6
Թեմաների կարճ նկարագրություն	7
Գործնական պարապմունքներ.....	13
Ռեֆերատներ.....	14
Ռեֆերատների թեմաներ	14
Գրականության ցանկ.....	15

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Պատմության ֆակուլտետ
Մշակութաբանության ամբիոն

Մարդու էթոլոգիա

Ուսումնամեթոդական ուղեցույց-ծրագիր

*Մասնագիտական դասընթացի
«Մշակութաբանություն» մասնագիտության մագիստրատու-
րայի II կուրսի ուսանողների համար*

Կազմ. **Ռուզան Ալբերտի Մկրտչյան**

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Հրատ. սրբագրումը՝ Վ. Դերձյանի

Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Տպ. մամուլը՝ 1,25:
Տպաքանակը՝ 100 օրինակ:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալ. Մանուկյան 1